փոկ կապես, ես քեզ կասեմ. շնորհրդ շատ, փոկակապ Յակոբ ապեր.

### Համբերութիւնը կեանք է:

Աքաղաղն ու հաւը եղբայրացան: Աքաղաղը դնաց  
այգին և սկսեց ուտել խակ պտուղներ. իսկ հաւն ասում  
էր նորան՝ մի ուտիր, եղբայր, սպասիր մինչեւ հասունա-  
նան: Աքաղաղը հաւին չ'լսեց. նա այնքան կերաւ, որ  
հազեւ կարողացաւ տուն հասնիլ:

—Վայ, քուրիկ, վորս ցաւումէ, ասում էր աքա-  
ղաղը: —Հաւը նորան անանուխի կաթիլներ խմացրեց, շա-  
ղախած մանանեխ կպցրեց և ցան անցկացաւ:

Աքաղաղն առողջացաւ և գնաց դաշտը: Այնտեղ  
նա շատ թռչկոտաց ու վազվեց և բոլորովին քրտսած՝  
մօանցաւ աղբիւրին, որ սառը ջուր խմէ: Հաւը իրատում  
էր նորան. մի անիր, եղբայր, ասում էր, սպասիր, քեչ  
հանգստացիր, յետոյ կը խմես: Աքաղաղն ականջ չարեց  
նորան սառը ջուրը խմեց և սկսեց դողացնել: Մեծ դժուա-  
րութեամբ կարողացան տուն հայնել նորան: Հաւը վա-  
զեց բժիշկ բերելու: Բժիշկն եկաւ և նորա համար դառը  
գեղ գրեց: Աքաղաղն երկար ժամանակ պարկած էր ան-  
կողնում:

Զմեանաղէմ աքաղաղն առողջացաւ և գնաց գետի  
ամիբ խաղալու: Գետը ծածկուած էր բարակ սառուցով:  
Նա կամեցաւ սղալ սառուցի վերայ: Հաւը իրատում էր

նորան: Մի՛ անիր, եղբայր, դեռ սառուցը բարակ է,  
և իսպառէ և կը խեղտուիս: Բայց աքաղաղը չ'լսեց նորան  
և սկսու սղալը խաղալ: Յանկարծ սառուցը իսպառեցաւ և  
մեր անհնազանդ աքաղաղն ընկաւ ջրի մէջն ու խեղ-  
տուեցաւ:

### Չիւն

Երբ որ ձիւն կուգայ, ես կուրախանամ,  
Որ դուրս պիտ ենիմ, դահուկ պիտ խաղամ. . .  
Բայց տեղու որքան աղքատ տըղայք կան,  
Որ տաք հալաւէ կարօտ կը մնան:

\* \*

Գայունի մարդնի մասն է, իսկ ո՞հո՞նչը . . . Աչչը ո՞հո՞նչէ  
մասն է, իսկ ծոծրո՞նչը . . . բերո՞նչը . . . գոգո՞նչը . . . յեւ-  
նէ՞նչը . . . ինչո՞նչը . . . ոպնէ՞նչը . . . ուստօքէ՞նչը . . . ճու-  
կո՞նչը . . . յօնսէ՞նչը . . . բո՞նչը . . .

Ի՞նչ մասեր ունի շան մարմինը, պատուեցէ՞ք  
ի՞նչ մասեր ունի հափ մարմինը, —Եղնիկի՞նը,

### Ուռչնակ

Մեր տան դիմաց, ծառի վերայ,  
Ճնճղուկը մեծ հոգսի մէջ է.  
Նա կտուցով խոտ է կրում,  
Մաղ ու ծղօտ, բուրդ հաւաքում,  
Իւր ձագերին տաք բուն շինում:

Արեգակը երբ դուրս եկաւ, ինչ մասով  
ճնշուկն իրան գործն սկսեց. և ա խողով ու  
Մինչև արեն մայր մտնիլը դպրու առյօն և  
Եւ գործ շինեց նա և երդեց:

Երբ որ զիշերը մօտեցաւ,  
Սիրուն թռչունը լուռ կացաւ,  
Եւ գլուխը թեերի տակ  
Հանգիստ քնով նա քնեցաւ:

Հենց լուսացաւ, ծեգը բացուեց,  
Սիրուն Ճնձղուկն նորից զարթեց,  
Անուշ ձայնով, քաղցր կերպով  
Իւր երգի տուտըն սկսեց:

### Աղուէմն ու կճուճը

Պառաւը դուրս գնաց գաշտը հունձ անելու: ճաշե  
համար նա վերցրել էր մի կճուճ կաթը, որը պահեց  
մի թփե տակ: Աղուէմն այս բանի հոտն առաւ, մօտ  
եկաւ, գլուխը կոխեց կճուճի մէջ և կաթը լակեց. յետոյ  
կամեցաւ յետ դառնալ բայց ցաւն այն էր որ գլուխը  
կճուճից չէր կարողանում հանել: «Ե՛, այ կճուճ, կատակը  
մի կողմը մնայ, բաց թող գլուխս. ես քո խաղածաղիկը  
չեմ», ասում էր աղուէսը գլուխը թափահարելով: Բայց  
կճուճն ամենեին նորան չէր լսում: Աղուէսը բարկացաւ.  
սպասէ, անիծած, քո կամքովը չեմ թողնում, տես հիմայ  
ես ի՞նչպէս կը խրատեմ քեզ: Ասաց ու գնաց գետը որ  
խեղտէ նորան. բայց երբ գլուխը ջրի տակը կոխեց,  
կճուճը ջրով լցուեցաւ և մեր գող աղուէմն էլ ջրի տակը  
իւր արժանի պատիժն ստացաւ:

35. Չեռների, ոտների և ընի մասերը:  
Զեռների մասերը. դաստակ, արմունք, ուսաց  
Ոտների մասերը. ազդը, սրունք, գարշապար:  
Բնի մասերը. կուրծք, փոր, կողեր, թիկունք, մէջք:

\* \* \*

Դաստակն չեռների մասն է. իսէ ո՞շուրը . . .  
Կուրծքն ընի մասն է, իսէ բունը . . .  
Արմունքն ուրի մասն է, իսէ Անիւնը . . .  
Ցեռունքն մարմուն մասն է, իսէ Գորշապարը . . .

### Երկու հովիւ

Երկու հովիւ, Պետրոսն ու Կարապետը, դաշտից  
միասին տուն էին դառնում: Գիտեն, Պետրոս, ասաց  
ընկերը, եթէ քո ունեցած ոչխարներից մէկն ինձ տաս,  
իմ հօտը քոնից երեք անգամ շատ կը լինի:—Ո՛չ, ասաց  
Պետրոսը. աւելի լաւ է, դու քո ոչխարներից մէկն ինձ  
տուր, այն ժամանակ մենք հաւասար կունենանք:

Մանուկներից ամեն մէկը քանի՞ ոչխար ուներ.

### Ուլերն ու գայլը:

Լինում է, չէ լինում մի այծ: Այս այծը իւր հա-  
մար անտառում մի տուն է շինում և իւր փոքրիկ ուլե-  
րով բնակվում է նորա մէջ: Ամեն օր նա դուրս է գնում  
արածելու, միայն գնալուց առաջ պատուիրումէ իւր ձա-  
գերին, որ ով էլ որ գալու լինի, դուռը բաց չանեն. ինքն

Էլ հանդումը՝ կանաչ խոտերի մէջ արածելուց յետոյ՝ երե-  
կոյին յետ է դառնում տուն և իւր երկար կեռ պողե-  
րով դրանը խփում է ու ասում.

Ի՞մ ուլեկներ, փոքր այծուկներ,  
Դէ՛ս շարժեցէք, դուռը բացէք.

Ես գալիս եմ կանաչ դաշտից,

Ապրուշմէ խոտն արածած,

Սառն աղբիւրի ջուրը խմած,

Կուրծս լեթը ես ձեղ համար

Կաթն եմ բերում իմ ծծերում.

Բացէք բացէք, ձեղ եմ ասում:

Ուլերը՝ լսելով իրանց մօր ձայնը, վազում՝ բաց են  
անում դուռը։ Մայրը ծիծ է աալիս նորանց և կրկին  
գնում է արածելու։

Այս առենը տեսնում ու լսում է դայլը և մտքումը  
գնում է խարէութեամբ ներս մտնել ուլերի բնակարանն  
ու նորանց ուտել։ Մի օր, երբ այծը դուրս է գնում արա-  
ծելու, դայլը մօտենում է նորա փարախին և սկսում է  
երգել միայն թէ հաստ ու կոպիտ ձայնով.

«Ի՞մ ուլեկներ, փոքր այծուկներ,  
Դէ՛ս շարժուեցէք, դուռը բացէք.

Զեր մայրն եկաւ, կաթը բերաւ . . . »

Ուլերը մի փոքր ականջ են գնում և իմանալով որ  
իրանց մայրը չէ երգողը, ասում ենք, լսում  
այդ մեր մօր ձայնը չէ. մեր մայրը բարակ ձայնով ու  
քաղցր է մկրում. Ասում են ու դուռը չեն բացանում։

Գայլը, սովածութիւնից ատամները կրծտացնելով, թող-  
նում է ու զնում։ Մի փոքր ժամանակից յետոյ գալիս է  
և մայրը. նա գովում է իւր ձագերին, որ իւր խօսքը  
լսել են և դուռը չեն բաց արել։ «Իուք շատ լաւ էք արել,  
որ դուռը չեք բաց արել, թէ չէ նա ձեզ ամե-  
նիդ էլ կուտէր»։

**Պառը և իւր մայրը։**

(Մանեկան երգ)

— Ինչի՞ կուլաս դու, գառնիկ։

«Եիստ ծեծ կերայ ես, մայրիկ»

— Քեզ ով ծեծեց, իմ գառնիկ։

«Մէկ կախարդ ողառաւ կնիկ»։

Ինչի՞ ծեծեց քեզ գառնիկ։

«Ծառի տակն էի, մայրիկ»։

Ինչով ծեծեց քեզ գառնիկ։

«Մէկ մեծ փայտով, իմ մայրիկ»։

— Որտեղիդ դարիկեց քեզ գառնիկ։

«Ոտիկներուս, իմ մայրիկ»։

— Ի՞նչպէս լացիր դու, գառնիկ։

«Մէ՛, մէ՛, մէ՛, իմ մայրիկ»։

\* \*

Պէտք ուստանա, առարկոյ է, իսէ լուրջը . . . Գնդան  
խաղալիք է, իսէ ուղա՞նը . . . Կայինը գործիք է, իսէ երրո-  
ջա՞ծը . . . Կողը ընդունէ իւստանի է, իսէ եղնի՞նը . . . Նո-

պաստառն վայրէնի անտառն է, ևսէ չտառն ։ . . . Թը լնջուիլ խոր է,  
ևսէ վարդէնի ։ . . . Խնձորէնին ծոռն է, ևսէ օչը . . . Գորդու  
առշոն է, ևսէ մոժա՞նը . . . Ենիշլը հոնչ է, ևսէ ծառը . . .

### Փոքրիկ որթը: \*

Փայլուն արելը արդէն մայր մտաւ,  
Լուսինն էլ վաղուց գնաց, թագկացաւ,  
Փոքրիկ աստղերը ամակի տակ մտան,  
Եւ ցուրտ ու խաւար գիշեր էր աշնան:  
Ամեն մարդ գնաց իւր տունը հասաւ,  
Ամեն երեխայ մօր գիրկը մտաւ:  
Միայն խեղճ որբը չունի հայր ու մայր,  
Չունի բարեկամ, ոչքոյր, ոչեղայր.  
Անտէր մնացած՝ Աստուծոյ կամքին,  
Խեղճը քնած է փողոցի միջն:

### Գայլը, արջը և աղուէսը:

Գայլը, արջը և աղուէսը հպարտ հպարտ խօսում  
էին միմեանց հետ: Գայլ ասում էր. ընկերներ, զիտէ՞ք  
թէ ես մինչեւ հիմայ քանի քանի ոչխար եմյափշտակել:  
Հենց որ հովիւր բանից կասկած չէ ունենում, ես թփերի  
տակից ծածուկ մօտենում եմ հօտին և մի գառը կամ  
ոչխար զրկում եմ ու փախչում: Եներն սկսում են ոռնալ,  
հաջել հովիւր վազումէ, մահակին ուսին, բոլորն էլ յետե-  
ռիցն են ընկնում, բայց որտեղ. ես արդէն անտառի մէջ  
իմ որսն անուշ եմ անում:

— «Ոչխարներն ինչ բաներ են, ասաց արջը. ես գո-  
մերն եմ քանի ում և այնտեղից եղներ եմ զուրս քաշում:»  
Աղուէսն ասաց. «Ե՛չ պարզներ, գուք ամեն բան  
ուժով էք անում. բայց տեսէք, թէ ես որպիսի խորա-  
մանկութեամբ մտնում եմ հաւանոցը, թառը դժնում եմ  
և լուռ ու մունջ՝ հաւերի պարանոցն այնպէս եմ ծալում,  
որ մի ձայն էլ չեն կարողանում հանել յետոյ, երբ դուրս  
եմ գալիս, հետքս այնպէս եմ մոլիրեցնում, որ սատանան  
էլ չի դանիլ: Ե՛չ, էլ ինչ երկարացնեմ: ինձ բոլոր հաւերը  
շատ լաւ են ձանացում:»

Ագռաւը, որ ծառի վերայ նստած լսումէր սորանց  
խօսակցութիւնը, ասաց. «Հա, հա, բայց այն էլ ճշմարիտ  
է, որ շուտով ամենքիդ կաշին էլ կը քերթեն:»

### 36. Աչքի, բերանի, դաստակի և դարշա- պարի մասերը:

Աչքի մասերը. Բիբ, ծիածան, սպիտակուց, կո-  
պեր, արտեանունք:

Բերանի մասերը. Նրթունքներ, ծնօսներ, լըն-  
գեր, ատամներ, լեզու, քիմք, կատիկ, կոկորդ, շնչափող:

Դաստակի մասերը. Մատներ, ափ, մատնար-  
մատներ:

Դարշապարի մասերը. Պատուանդան, կրունկ,  
մատներ, ճիտք:

Առածներ. Լեզուգ չուանի գիր:—Լեզուի տակին սկսոր  
չկայ, որ սուս ասելիս ծակի:—Սուս ստովի տունը կսակ ըն-  
կաւ, ոչ չհաւատաց:—Օձի կծածը կ'ապահնալ, լեզուի  
կծածը չի սաղանալ:

Հանելուկներ. 1. Փոքրիկ պատուհան, շեղճով միքը:  
2. Զորս մայր կային նմանակ, ունէին նինդ նինդ զաւակ, նինդը  
մէկ մօր էին որդիք, նինդը նորանց եղօր որդիք, տան էկ մօր եղօր որդիք.

### Օ՞յլը և ջանասէրը:

— Այսօր խաղամ, վաղը կը սովորեմ, ասումէ ծոյլը:

— Վաղը կը խաղամ, այսօր սովորեմ, ասումէ ջանասէրը:

Ծոյլ աղջիկը. — «Բանն ինչ կանեմ, կեզառոտ է,  
բամբակը կողիզոտ է, մետաքս պիտի՝ որ մանեմ, մաս-  
տաք պիտի՝ որ ծամեմ, կտերը տիտիկ անեմ, անցնողն  
մաիկ անեմ, ուտեմ խմեմ, մթնի, քնեմ»:

Ծոյլ աղան: Նորերս հանիր, թեք դցիր, ծածկիր  
ինձ ու խաչակնքիր վերաս, յետոյ ես ինքս կը քնեմ:

\* \*

Եղը դէմէի մտան է, իսէ բէ՛բը . . . Ագը յէտագէ մտան է,  
իսէ դէմէլը . . . Գարշաղարը առի մտան է, իսէ պատաւանդա՛նը . . .  
Դէմէլ գլւի մտան է, իսէ գլւէլը . . . Ծիսծանն աչի մտան է,  
իսէ աչչը . . . առանձէլը . . . իրունէլը . . . ռոնէլը . . .  
աշշը . . . բառանը . . . ծնօդնէլը . . . Մորենին լւան-  
է, իսէ իւղնին . . . կուժն աման է, իսէ իշուն . . . 0չը սո-  
շուն է, իսէ մորենին . . . յի՞ն . . . վա՛գը . . . մտ-  
ծանը . . . արօնը . . . բառիւլունը . . .

### Մէկ և երկու:

Բերան մէկ ունինք, ականջներ՝ երկու: Ինչի՞ ինքդ  
հասկացիր. աւելի լսիր և սակաւ խօսիր:

Բերան մէկ ունինք, իսկ աչքեր՝ երկու: Ինչի՞ եր-  
կուսով նայիր, երկու մտածիր, մէկ պատասխանիր:

Բերան մէկ ունինք, իսկ ձեռքեր՝ երկու: Ինչի՞  
ինքդ հասկացիր. երկուսով գործիր, մէկով վայելիր:

### Մայիս

Մենք արժանացանք ուրախ մայիսին,

Ծառեր, ծաղիկներ ողջ կանաչեցին.

Կապոյտ երկնքում փոքրիկ ամպերը

Ուրախ ու զուարժ առաջ վազեցին:

Տերեշատ ծառի ստուերների տակ

Թռչուններն իրանց երգերն են երգում:

Կանաչ գաշտերի փափուկ մարգերում

Պէսպէս կենդանիք ուրախ արածում:

Տարուայ ո՞ր եղանակն է նկարագրում պատեղ:

Ո՞ր ամսին արժանացանք:

Ի՞նչ է ուրախանում մեզ մայիսը:

Ի՞նչ է պատահում ծառերին եւ ծաղիկներին:

Ի՞նչ է տեսնվում երկնքում:

Ի՞նչ է լսվում ծառերի ստուերներում:

Արեմն որո՞նք են գարնան նշանները:

Ա Զ Խ Ս. Բ

Աստուած տաքացնում է ոչխարին:

Գարնան վերջերում հովելը խուզեց իւր ոչխարները:  
Դեռ ցուրտ էր և խեղճ կենդանիները դողդողում էին:

Աստուած խղճաց ոչխարների վերայ և աշխարհ ու-  
ղարկեց արեի տաք ճառագայթներն ու ջերմ քամին:  
Ոչխարները տաքացան և ուրախ ուրախ վազեցին դէպի  
դաշտը. իսկ աշունքադէմ նորանց բուրդը նորից դուրս  
եկաւ:

Ի՞նչ շինեցին ոչխարի բրդից:

Մանուկներն ամբողջ ամառ ուրախ դուրարթ խա-  
զում էին: Զմեռն եկաւ և նորանք չկարողացան առա-  
ջուայ պէս: շուտ շուտ դուրս վազել: Տիտուր նստուած  
էին լուսամաւտների առաջ և նայում էին դէպի դուրս,  
ուր ձիւնը քուլայ քուլայ էր անում: Մայրը գնեց ոչխարի  
բուրդ, թել մանեց և փափուկ դուլպաներ ու թաթպան-  
ներ դործեց իւր որդւոց համար. յետոյ շալ դործեց և  
նորանց համար շորեր կարեց: Այնուշեռն մանուկները՝  
տաք հագնուած լինելով, համարձակ դուրս վազեցին և  
ուրախ դուրարթ սկսեցին ձնագունտի խաղալ:

\* \* \*

Գարում էն գրչու իսրում էն . . . իսրում էն . . .  
լորում էն . . . իսն էն գուլու . . . իտում էն . . . Արօ-

րում վարում էն, իսէ մատիդում վ. . . Հայու ուրում էն, իսէ  
իտիլում . . . Սեղանը շինում էն փայտից, իսէ որինը . . . Հայու  
լինում էն տաշի-իւր, իսէ գիտին գորում էն . . . ուսուշ Անգաւան-  
ում ուսուշ այսուց ամ անուանուց ուն մաս մինչ  
այսի պահն Պորացանկութիւն. այսն ու զօնա  
ան արձուուր և մերեն անուանուց սր մարդկար շաբաթներ:

1. Զմեռ էր Գետը ծածկուել էր սառուցով: Գարե-  
զինն իւր ընկերների հետ խաղում և սղզում էր հաստ  
սառուցի վերայ: Բաւական խաղալուց յետոյ նա ուրախ  
ուրախ տուն վազեց և ասաց իւր հօրը: «Ա-լո, հայրիկ,  
ի՞նչ պատուական եղանակ է ձմեռը, որքան ուրախու-  
թիւններ ենք անում մենք՝ ձնագունտի ենք խաղում,  
սղզում ենք սառուցի վերայ, սահնակներով զբօսնում  
ենք . . . Ա-լո, ինչ էր լինէր՝ որ միշտ ձմեռ լինէր: Հայրը  
հանեց ծոցի տետրակը և ասաց: Գրիր սորա մեջքո ցան-  
կութիւնը: Գարեգինը զբեց:

2. Զմեռն անցկացաւ: Գարունը եկաւ: Բայցուեցան  
ծառերի ծաղիկները: բարձրացան դաշտերի խոտերը. ամե-  
նայն տեղ ստոստում էին հազարաւոր թիթեռներ և  
բղեղներ: Գարեգինը դուրս գնայ դաշտը, ծաղիկներ քա-  
զեց, թիթեռներ բռնեց, իսկ երբ երեկոյեան տուն եկաւ,  
ասաց հօրը: պէտք է իմանաս, հայրիկ, թէ որքան ուրա-  
խացայ ես այսօր: ձմարիտ, շատ հիմնալի եղանակ է  
գարունը, և եթէ ինձ մնար, ես կը ցանկանայի, որ միշտ  
գարուն լինէր: Հայրը հանեց տետրակը և առաջարկեց  
Գարեգինն, որ իւր ցանկութիւնը զբէ: Գարեգինը զբեց:

3. Ամառնացաւ: Գաշտերի խոտը հասել էր և  
հնձող էր կանչում: Գարեգինը և իւր հայրը գնացին խոտ  
հնձելու: Քանի որ հայրը վեր էր տալիս անուշահու

խոտը, Գարեգինն իրան զուարձութիւններն էր կմտաւ բում. ձուկն էր բռնում գետակից, հատապուղներն էր հաւաքում, հոտաւէտ խոտերի վերայ դղրվում էր; Երեկոյին տուն յետ դառնալիս, նա ասաց իւր հօրը. «Ահա այսօր ես անչափ ուրախացայ: Երանիթէ ամառը վերջ չունենար»: Գարեգնի այս ցանկութիւնն էլ գրուեցաւ տետրակի մէջ:

4. Վերջապէս եկաւ և աշունը: Այդիներում լաւ լու պտուղները հասել էին. խնձորը, տանձը, սալորը, սերկմէլը, խաղողը. . . Մարզիկ դուրս էին եկել այդեկութի, Դարեդինն էլ իւր ծնողաց հետ դնաց այդի և քայլն սկսեցին: Պէտք էր տեսնել թէ ինչպէս էր վազվզումնա մէկ ծառի տակից դէսի միւսը, ծիծաղում, երգում, խաղում և պատւղներից բերանը զցելով՝ անուշանում: Վերջը նա վազեց իւր հօր մօտ և նորա պարոնոցովը փաթաթուելով՝ ասում էր. Հայրիկ, աշունը տարուայ ամենալաւ եղանակն է անկասկած:

Այն ժամանակ հայրը հանեց փոքրիկ տետրակը և ցոյց տուեց, որ նա միենցն բանն է ասել գարնան, ձմեռուան և ամառուան համար:

Պատմեցէր մեր բառերով այս պատմութիւնը. ասացէր, թէ բանի գլաւոր կտորների կարող էր բաժանել սորան. ի՞նչ է ասուած իւրաքանչիր կտորում:

### 37. Հինգ զգայարանը.

Աչքով տեսնում ենք առարկան. ականջով լսում ենք նորա ձայնը. քթով նորա հոտն ենք իմանում, լեզով՝ համը, իսկ մատներով շօշափում

ենք և խմանում նորա պնդութիւնը, փափկութիւնը, թանձրութիւնը, նօսրութիւնը, սառնութիւնը, տաքութիւնը, հարթութիւնը, անհարթութիւնը. . .

\* \* \*

Տեսողութեան գործարանն աչքն է. տողութեան գործարանը . . . հոտառութեան գործարանը . . . շօշափողութեան գործարանը . . . ճաշակի գործարանը . . .

Առաջներ, Ականջն էնդուը չի մեծանում, որ շատ բաներ է լսում: —

Անհունար մաքուլ եղանակը կը լինե: —  
Ուշեցի աչքը քեզ համար լոյս չի տալ:

Հանելուկ, Փետուըով կը ցանեն,  
Աչքով կը քաղեն,  
Գլուխով կ'ուտեն,  
Մաքով կը մարսեն:

Խրատ. Մի խնդրիր Աստուծուց ոչ փող, ոչ պատիւ,  
Այլ քեզ կրթելու խելք, շնորհք, սիրա ազնիւ:  
Նրբէք մի պարձենար՝ թէ արդէն գիտուն ես.

Որքան շատ սովորես, այն է օգուտ քեզ:  
Ընկերներիդ օգնող եղէր, աղքատներին սէր ցոյց տուր.  
Տէրն ասումէ՝ չէ անվարձ նաև բաժակ մի ցուրտ ջուր:

### Կաղն ու կոյրը:

Կաղն ու կոյրը պէտք է անցկենային մի սրբնթաց առուակով: Ի՞նչպէս անէին: Կոյրը կաղին շալակեց և երկուսն էլ ապահով անցկացան:

**Փոքրիկ գառնուկը:** Ա զ մ ձ  
Մէկ օր գնաց իւր հօր հետ գաշար, որ արածի,  
Եւ իւր կամբին սկսեց թռչել քարերի տակը.  
Զեր ուղում որ փոքր միջոց հանդիսաւ նստի:  
Գարիվեր, գարիվար վազվզում էր անխոշեմը.  
Թէ քար, թէ փայտ, թէ խոտ, թէ ձոր, բնաւ չէր նայում:  
Արդեակ, հանդարտ, ձայն էր տալիս նորա մայրը.  
Զգոյշ կացիր, որդեակ, լսիր իմ խրատը:  
Բայց գառնուկը հէնց խաղում էր ու թռչոտում:  
Եւ գարիվեր ու գարիվար միշտ վազվզում:  
Վերջն, երբ գառը իւր մօր խօսքին ականջ չարաւ,  
Սարի գլմին իւր գժութեան պատիմն առաւ.  
Մի մեծ քար կար այնտեղ ընկած, որի վրայով  
Մեր գառնուկը խալ էր անում թռչոտելով.  
Մէկ էլ տեսնես, ոտի մէկը տակով եղաւ,  
Քսան տեղից կտոր կտոր վշրուեցաւ:  
  
Ա. ո. ա. ծ. Մեծի ասած, փոքրի լսած:—Ասողին էլ լսող պիտի:

Ասունէն ծառ է, իսէ ճառըին լրափ է:—Չին չըբխուանի  
ինստանի է, իսէ ծիծւանը էլ . . . Բահը գործիւ է, իսէ բաղ-  
իալումը . . . Գնառուը նոշոշիւ է, իսէ փլաւը . . . Քանոնը  
դուստրան առարկայ է, իսէ ճուրճը . . . Բարը լուշուն է, իսէ  
օչը . . . Կառամբը բանջարանոցի բայս է, իսէ սրբը նը . . .  
Առայտը իտոր է, իսէ սիսէ նը . . . Նրէտը հանս է, իսէ բը-  
շէ նը . . . Առեծը վայրէնի գողան է, իսէ ուշը . . .

Տառեկը յուի է, իսէ գործը . . . աշու-էնը . . . ինշը . . .  
Գորին . . . գինէն . . . բաժունը . . . ուրինէնը . . . ու-  
շունը . . .

### 38. Վարդիկ, կենդանիներ, բոյսեր, հանքեր:

**Վարդիկ.** Հայր, մայր, եղբայր, քոյր, հօրեղ-  
բայր, քեռի, հօրաքոյր, մօրաքոյր, ծերունի, պառաւ,  
մանուկ, տղայ, աղջիկ, կին, վաճառական, աղքատ . . .

**Կենդանիներ.** Գաղաններ, թռչուններ, ձկներ,  
սողուններ, միջաններ, խեցգետիններ, սարդեր:

**Բոյսեր.** Ճառեր, թփեր, հացարոյսեր, խոտեր,  
բանջարեղիններ, սունկեր, մամուռներ:

**Հանքեր.** մետաղներ, քարեր, հողեր, աղեր:

\* \* \*

**Ա. ո. ա. ծ. ն ե թ.** Խնչ չի ծնում, նա չի մեռնում:—  
Երկաթը տաք տաք կը ծեծեն:—Ապրել կայ երկաթ է, ապ-  
րել կայ ապծաթ է:

**Հանելուկ.** Ի՞նչ բան է այն, որ առաւօտեան չորս ոտի վրայ է  
մանզալիս, մաշխն երկո, իսկ երեկոյեան երեր:

**Ա. ր ա դ ա խ ս ո ւ թ ի ւ ն.** Ծիտը միրան ծերին, ծտի ծուտի  
ծիտը ծուռ:

\* \* \*

**Աշտառը** հարդ է, . . . լուսիւ . . . լուշունը . . .  
Գիրքը . . . սորիւ . . . ինը . . . մանունը . . . եր-  
շինը . . . ելբայրը . . . ծառը . . . մանունը . . .

Գողջը գողջը լուս շնչը . . . լուս շնչը . . . իրապը . . .  
շնչը . . . հողիը . . . օքորուը . . . թոռիշը . . . մեցիշը . . .  
շնչը . . . հողիը . . . մշտապը . . .

Պ Ա Ա Կ Ն Ե Ր :

(պարերգ)

Մէկ սիրու լինինք

Եւ մէկ հոգի.

Միութիւնը

Գեղեցիկ զարդ է կեանքի

լա, լա, լա, և այլն:

Ի՞նչ խաղի մէջ

Որ զոհ լինինք,

Միշտ պիշտք ունինք

Թէ միութեան, թէ սիրոց:

լա, լա, լա, և այլն:

ՃՈՒՇԱՆԻ ՊՍԱԿ

Օրինակ անմեղութեան,

Գաշտի սիրուն դու շուշան,

Եկ, զարդ եղիք մեր պարին,

Եկ, միացիք մեր երդին:

լա, լա, լա, և այլն:

Վաստ ծաղկին լինինք նման

Եւ օրինակ հեղութեան,

Թող վարդը հանգստանայ

Մեր մատաղ սրտի վրայ:

լա, լա, լա, և այլն:

ԿԱՂՆԵԱՅ ՊՍԱԿ.

Կանաչ խոտը դաշտերի

Մեր սրտին է սիրելի.

Թող ճիւղը կաղնի ծառին

Պատկ լինի մեր գլամին.

լա, լա, լա, և այլն:

ՄԱՆՈՒՇԱԿԻ ՊՍԱԿ.

Աղնիւ սիրուն մանուշակ,

Համեստութեան օրինակ,

Տնւր մեղ ծաղկի գեղեցինե,

Քո քնքոց հոտ անուշիկ

լա, լա, լա, և այլն:

ԲՈԼՈՐԸ ՄԻԱՍԻՆ


Սիրուն կանաչ պատկին,

Թող միանանք, բարեկամք,

Եւ յոյսերը անբաժան

Մնան մեղնից յաւետեան

լա, լա, լա, և այլն:



Արջի թաթը

Գիւղացիք թակարդ սարքեցին և մի արջ բունեցին:  
Արջին սպանելով չսպանեցին, միայն կացնով նորա թաթը կարեցին: Արեք ոսնոնի արջն էլ կաղի տալով փախաւ, գնաց: Մի խեղճ պատաւ խնդրեց, որ արջի թաթը իրան տան, խուզեց նորա վերայի մագր և կաշին էլ մաշկեց: Պառաւը միսը կրակին զբեց եփելու, ինքն էլ նստեց կաշուի վերայ և սկսեց մանել նորա մազը: Մանեց մանեց մինչեւ կէս գիշերը Կէս գիշերին՝ մէկ էլ տեսնես, մի ձայն է լսում, մի բան լուսամուտի տակ թըմ-թըմ-փացնում, ըզգկըզկացնում է:

Պառաւը լուսամուտից գուրսմտիկ տուեց և վախից քար դարձաւ. տեսնում է որ երկօտնանի արջը՝ փայտի վերայ դիմհար տալով, բարձրանում է և մըրթմըրթում:

Դէհ բարձրանամ, բարձրանամ,

Լորենի ոտի օդնութեամբ,

Հօնի փայտի օդնութեամբ.

Արարած աշխարհ քնելէ,  
Զուրն էլ վաղուց դադարել է,  
Ամեն մարդ քնած է շենում:  
Ամեն մարդ քնած է զիւղում:  
Միայն պառաւը չէ քնած.  
Իմ կաշես իւր տակը զցաց,  
Իմ բրդից նա թել է մանում,  
Իմ մակ կերակուր եփում:

Պառաւը շատ վախեցաւ, որովհեաւ նա կենում էր  
մեն—մենակ զիւղի մի ծայրում: Խոնչ անէր, ի՞նչ չ'անէր,  
արջեց ի՞նչպէս աղատուէր: Արջը քիչ էր մնացել, որ ներս  
մտնէր. նա արդէն ձեռնափայտով թըլիկ—թըլիկացնում  
էր: Պառաւը թոնիրի բերանը բաց արեց, ու ինքը բարձ-  
րացաւ ամբարի գլուխը: Արջը տըփտըփելով դուռը գը-  
տաւ, կընկահան արեց, ներս մտաւ խրճիթի մէջ և  
սկսեց մթնումը պտոյտ պտոյտ անէլ. մին էլ տեսնես—  
թրըմի—ընկաւ թոնիրը:

Պառաւը շուտով ամբարի դիմիցը ցած թռաւ,  
ծածկեց թոնիրի բերանը և գնաց հարեաններին կանչեց:  
Հարեաններն եկան և արջին սպանեցին:

39.

Ա. մի սն ե ր. Յունվար, փետրվար, մարտ, ապրիլ,  
մայիս, յունիս, յուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմ-  
բեր, նոյեմբեր, դեկտեմբեր:

Զ մե ր այ ի ն ա մի սն ե ր. Դեկտեմբեր, յունվար,  
փետրվար:

Ա. մա ր այ ի ն ա մի սն ե ր. . .

Աշնան այ ի ն ա մի սն ե ր. Սեպտեմբեր, հոկտեմ-  
բեր, նոյեմբեր: Ապրիլ գետնա օգոստոս միջնամյաց մի քաղցի  
Գարն այ ի ն ա մի սն ե ր. . .

Կոր տարի

Ահա հասաւ նոր տարի, ու մյուլին զցի  
Հետը բերեց նոր բարի—  
Մանըր տղայք՝ ուրախ օր  
Բարի զաւակ՝ հօրն ու մօր: բայ ժամանակ  
Մանըր տղայքն են ուրախ,  
Ունին կաղին, կօղինախ,  
Սալորի չոր, չամիչ, թուզ  
Փլշատ, ունաբ ու ընկուզ:  
Մանըր տղայք, չը մոռնաք  
Աշխարհում չէք մենակ.  
Ուրիշ շատ իւղձ տղայք կան  
Աղքատ և ան օգնական

Նոքա հայր ու մայր չունեն,  
Ու չոր հացի կարօտ են.

«Աղքատներին ողորմած:  
Եղէք», կասէ ձեղ Աստուած:

\* \* \*

Յունվար յելային ամեն է, իսկ յայի ու . . . Աւորումները  
աշնանային ամեն է, իսկ փետրվարը . . . յարդը գարնանային ամեն է,  
իսկ յունիսը . . . Յուլիսը մարտյին ամեն է, իսկ հունիսը . . .  
սպրիլը . . . օգոստոսը . . . դեկտեմբերը . . . նոյեմբերը . . .

\* \*

Տարին քա՞նի ամիս ունի: Ո՞րն է առաջին ամիսը: Ո՞րն է վերջինը, Ո՞րոնք են զարնանային ամիսները: Առաջէր ամարնային ամիսները: Ո՞րն է աշնանային վերջին ամիսը: Դա ո՞ր եղանակի ամիսն է: բանի՞երոյն է... .

### Վայիսին.

Երբ մայլախն ես անցնում եմ անտառով,  
Դեղեցկագոյն թռչուններ շատ եմ տեսնում:  
Ամեն մէկը ուրախութեամբ երգելով  
Աշխատում է տաք բուն շինել թիվերում:

Երբ անցնում եմ ես ծաղկապատ գաշտերով,  
Նատ թիթեռներ և բզեզներ եմ տեսնում:  
Աւ ու սպիտակ և հազար մի գոյներով,  
Ծաղկից ծաղկել թռչոտում են, ծրվում:

Ա՝ լու, շատ սիրուն, շատ դեղեցիկ և դաշտը,  
Որի վերայ ոչխար տաւար և այծեր  
Ամեն կողմից բառաչում են ու մայում  
Եւ ինձ իրանց աշխայժ ձայնով գրաւում:

### Վեղուներ.

Գարունն սկսուեցաւ. արեգակը հալեցրեց դաշտերի  
ձիւնը. հին՝ զեղնած խոտերի մօտ գուրա եկան նորանոր  
կանաչ բողբոջներ. ծառերի կոկնները բացուեցան և  
փոքրիկ տերեններ առաջ բերին:

ԱՀա մեղուն էլ զարթեցաւ իւր ձմերային քնից,  
սրբեց աչերը իւր բրդոս թաթիկներով, զարթեցրեց ըն-  
կերներին և միասին դուրս նայեցին լուսամուտից, որ  
տեսնեն թէ ձիւնը, սառուցը և հիւսիսային սառը քա-  
մին անցել են:

Մեղուները տեսնում են, որ արեգակը փայլում է,  
որ ամեն տեղ տաք է և լոյս նորանք դուրս են գալիս  
փեթակից և թռչում են դէպի ծիրանի ծառը:

«Սիրուն ծիրանենի, չունիս մի բան խեղճ մեղու-  
ներիս համար. մենք ամբողջ ձմեռ քաղցած ենք»:

— Ո՛չ պատասխանում է ծիրանի ծառը, դուք շատ  
շուա էք դուրս եկել. իմ ծաղկեները դեռ ևս պահուած  
են. կոկններիս մէջ: Գնացէք նշենուն հարցրէք»

Մեղուները թռան գնացին նշենուն մօտ. «Սիրելի  
նշենի, արդեօք մի բան չունիս սոված. մեղուներիս հա-  
մար»:

— Վաղը եկեք խնդրեմ, պատասխանում է նորանց  
նշենին. այսօր ինձ վերայ ոչ մի բացուած ծաղիկ չ'կայ.  
իսկ երբ կը բացուին, ես մեծ ուրախութեամբ կընդու-  
նեմ ձեզ:

Թռան մեղուները կակաչի մօտ, նայեցան նորա փայ-  
լուն գլխին, բայց նա էլ ոչ հոտ ունէր և ոչ մեղը:

Մեղուները տրտում և քաղցած կամենում էին յետ  
դառնալ տուն, բայց տեսան թփի տակ մի քնքոյշ մուգ  
կապուտ ծաղիկ: Սա մանուշակն էր: Նա բաց արաւ  
մեղուների համար իւր կոկնները, որոնք լիքն էին անուշ  
հոտով: և քաղցր հիւթով: Կերան կամեցին մեղուները և  
ուրախ զուարթ յետ դարձան տուն:

### Շոկտեմբերին:

Աըւն իւր ոյժը կորցրած՝ Շատ թռչուններ և թիթեռներ  
Ամպերի տակ ծածկուեցաւ, Անյախտացան դաշտերից.  
Սաստիկ քամին ողջ ծառերի ծառը չունի կանաչ տերեւ,  
Տերենները վեց ածաւ: Նա զրկուած է իւր զարդեց:

Երկնքումը ամայի քուլէքն Ինչք՞ դաշտերի սողունները  
Անձեներ են պատրաստում, և վայենի թռչունները  
Անտառը եւը տերեներով Շտապում են իրանց համար  
Առուն տիսուր քչքում: Մի ապահով տեղ գտնել:

\* \* \*

Աչքը և գիշը դեմքի մասերն են, իսկ աշբը և սրբագը...  
Թափակը և արճաւնը զետքի մասերն են, իսկ հուրծուցը և փոխը...  
Գլուխը և պարագանը մարմի մասերն են, իսկ սպիտակուցը և ծիստացը...  
Բիշը և արտեառունչը աչքի մասերն են. իսկ առանցքը և լուսաւուն...  
Մարտը և առյօնը գործունոյին ամեներն են, իսկ սեպակը միջները...  
Յունիսը և յունիսը ամարդոյն ամեներն են, իսկ յունիսը վարչը...  
Ետքը և տառը և խոպը...  
Սունը և ծաշեցը բոյսերն են, իսկ աշը և երանը...  
Աշունը և պահապահը...  
Կալը և ջրագը...  
Կիւրակի և երշոշաբեկի...  
Գործունը և յմագը...  
Վիւրակնամուտ.

Խրիկնաժամի զանգակը տուին,  
Քարեսպաշտ մարդկանց ժամ հրաւիրեցին.

Վաղը կիւրակի՝ Աստուծու օրն է:

Վերջացրէք գործերդ, հանգստեան ժամն է:

Լսեց գիւղացին դաշտումն այս ձայնը,

Դէաի տուն քշեց եզն ու գութանը:

Գիւղական փոքրիկ պարզ եկեղեցին

Լցուած մարդիկը աղօթում էին.

Քառը քրտնքով գնած մոմերը

Սուրբերի առաջ մեզմ վառվում էին:

\* \*

Մանդազով վեր են տալիս, իսկ դերանդիով Հնձում են:  
Կացնով ալցում են, իսկ սղոցով կտրում են: Դանամով լար-  
սում են, իսկ ասեղով մորթում են: Թիակով կալսում են, իսկ կամով քերում են: Աչքով լսում են, իսկ ականջով տես-  
նում են: Լեզուով հոտոտում են, իսկ քթով Ճաշակում են:  
Բահով հերկում են, իսկ արօրով քանդում են: Գրիչով կար-  
դում են, իսկ գրքով գրում են: Կովը և ձին մսակեր կենդա-  
նիներ են, իսկ կատուն և շունը՝ լսոտակեր: Հաւը և ըադը  
վայընի թռչուններ են, իսկ արծիւը և ցինը՝ ընտանի:  
Գիշը և մատիտը խաղալիք են, իսկ գնդակը և հոլը՝ գտ-  
սական առարկաներ:

Այսէս է՝ պատախանեցէր եւ գրեցէր:

### Վախկոտ Յովհաննէսը:

Յովհաննէսի մայրը տաշտումը խաշ հունցեց և դրեց  
վառարանի մօտ որ քացախի, իսկ ինքը գնաց հարեա-  
նի տուն:

Յովհաննէսը մթնով տուն դարձաւ, կանչեց, ձայն  
տուեց, — մարդ չ'կար: Յետոյ նա կամեցաւ կրակ վառել,  
բայց երբ վառարանին մօտեցաւ, պմպընցի ձայն լսեց:  
«Նրեի քաջք է», մուածեց Յովհաննէսը և վախից սկսեց  
վախչիլ: Հակառակի պէս կրակախանիչը ոտովն ընկաւ և  
նորա ծայրը ճակառին դիպաւ: «Վայ, Աստուած, վայ, օգ-  
նեցէք, օգնեցէք». գոռաց Յովհաննէսը և կամենում էր  
դուրս վախչիլ տանիցը. բայց գուրս վաղելիս տրեխի ծուպը  
դրան տակովն եղաւ և Յովհաննէսը փառեցաւ սեմի  
վերայ ու ողբալի ձայնով գոռում էր. «Վայ Աստուած,  
վայ, օգնեցէք, աղատեցէք. քաջքը բռնել է ինձ»:

Հարեանները լսեցին այս դորգոոոցի ձայնը, եկան  
բարձրացրին կիսակենդան Յովհաննէսին, բայց երբ իմա-

ցան, թէ բանն ինչումն է, սկսեցին նորա վերայ ծիծա-  
ղել Յետոյ շատ երկար ժամանակ ամենքը բարկացնում  
էին Յովհաննէսին և ասում՝ թէ նա ինչպէս վախեցա-  
տաշտի խմորից, անկիւնում դրած կրակախառնիչեց և իւր  
տրխի ծուպերից:

### «Պուրը» ծառ.

Ենեմ ծառը զարդարեմ, միայն յամուն  
Արգամ տակը միմիթարեմ, այսուն և յայսի  
Հաւի փառիկը մորթեմ,  
Տանեմ գետը լուանամ,  
Եփեմ ու զորանին տամ.

Չորանն ինձ մի ոխչար տայ,

Ոչխարըն Աստուծուն տամ;

Աստուծուած ինձ մէկ եղբայր տայ:

Եղբայր, եղբայր, ջան եղբայր,

Ջանըս քեզ մատաղ, եղբայր.

Կարայ եմ կարել կարձ եկել

Ճան մայ եմ շարել խոչ եկել

Ճան մայ մատաղ եղբայր.

Քեզ համար եմ տատակել

40. Վարդիկ հասակներին և պարապ-

մունքներին համեմատ:

Վանուկ. Պատանի. Երիտասարդ. Ծերունի. Պառաւ.

Վաճառական. Արհեստառոր. Զօրական. Քահանայ. Աստի-

ճանաւոր. Պարտիզան. Մուրացկան .

\* \*

Առաջնորդ. Աղքատն ունի հաց ու պանիր, գեշնը քունը  
չի տանիլ: — Աղքատ ու հպարտ: — Դաընին դանակ չի մինիլ,  
ջուլհակն պատան: — Երեխն ասին՝ ինչը ես լալիս, ասաց՝  
խօսքս անց ա կենում, էնդուք:

### «անելուկ:

Ծեր Օհանը դուրս եկաւ դաշտը. շարժում էր իւր  
թեւը և միշտ նորանցից թռչուններ էր դուրս թողնում:  
Նա շարժեց չորս անգամ և դուրս արձակեց ընդա-  
մենը տասներկու թռչուն: Երբ թռան — գնացին առա-  
ջին երեքը, ցուրտն սկսեց, գետերը սառան, մարդիկ  
մրսեցան: Երբ թռան երկրորդ երեքը, եղանակը  
տաքացաւ, շոգերն սկսեցին, արտերն ու պտուղները հա-  
սան: Երբ դուրս թռան մնացած երեքը, փչեց  
սառը քամին, սկսեցին անձրեններ և մառախուղներ:

Ծերունու թռչունները հասարակ չէին. նորանցից  
ամեն մէկը ունէր չորս թեւ, իւրաքանչիւր թեւի վերայ  
եօթը վետուր, իսկ վետուրների մի կողմը սե էր, միւսն  
սպիտակ: Ամեն մէկ թռչուն, իւրաքանչիւր թեւ և ամեն  
վետուր իւր անունն ունէր:

Ի՞նչ է լինում գարնանը օդի մէջ, զետերում, դաշտերում, անտառ-  
ներում:

Ի՞նչ է լինում ամառը օդի մէջ, զետերում, դաշտերում, անտառ-  
ներում:

Ի՞նչ է լինում աշնանը . . .

Ի՞նչ է լինում ձմեռը . . .

**(Օրորոցի Երգ)**  
Թուն եղիքը բալաս, աչքը խուփ արա,  
Նախշուն աչերուդ քուն թռղ զայ վերայ.

Օր—օր—օր բալաս, օր—օր ու նանի,  
Խմ անուշ բալիս քոնը կը տանի:

**Ոսկի խաչ վրզեդ՝ քեղի պահապան.**

**Նարօտ կապել է ծարէն տէղ բարան.**

Օր—օր—օր բալաս, օր—օր ու նանի,  
Խմ քունը կը տանի:  
**Մաւի հիլուններ կախել եմ ես ալծուց ամ**  
**Նազար չես առնուլ քուն եղիք, մի լար.**

**Ա.յս քանի՛ մօրդը անքուն աչքովը**  
**Անցել է օրեր օրոցքիդ քովը.**

Օրոցքը օրինմ, օրով լոյ քաշես,  
**Մըզկտան ձայնով սիրոս չը մաշես.**

Դուն ալ քուն եղիք, ինձի ալ քուն տուր,  
**Սուրբ Աստուածամայր մանկիկիս քուն տուր.**

Օր—օր—օր բալաս . . . .

**Գիւղացին եկ Արջը**

**1. Կարտոփիլ:**

**Գիւղացին և արջը բարեկամացան և միասին խոր-  
հուրդ արին, որ կատոփիլ ցանեն: Գիւղացին ասաց.**

«Արջ բարեկամ, արմատն ինձ, գլուխը քեզ»: Արջը հա-  
մաձայնեցաւ Նատ լաւ կարտոփիլ գուրս եկաւ: Գիւղացին  
վեր առաւ արմատի կարտոփիլներն, իսկ վերևի չոփերը  
տուեց արջին: Արջը շատ էլ վերնթվերնթաց, բայց ի՞նչ  
կարող էր անել:

**2. Ծորեն:**  
Միւս տարի գիւղացին նորից ասաց արջին. Արջ  
եղայր, արի էլի միասին ցանք անենք:

— Լ աւ, պատասխանեց արջը. միայն այս տարի ես  
արմատը կը վերառնեմ, իսկ դու վերցրու վերևի մասը:

Գիւղացին համաձայնեցաւ, բայց այս անգամ կար-  
տոփիլի փոխանակ ցորեն ցանեց: Նատ առատ ցորեն դուրս  
եկաւ: Գիւղացին վեր առաւ հասկերը, իսկ արջին մնաց  
արմատները:

Ի՞նչ բոյսեր դիտէր, որնց արմատն ենք ուտում.  
Ի՞նչ բոյսեր դիտէր, որնց վերին մոսն ենք ուտում:

**41. Տօներ:** \*

**Աստուածամօր ծնունդը. Աւետումն. Քրիստոսի ծը-**  
**նունդը. Մկրտութիւնը. Տեառնընդառաջ. Ծաղկազարդ**  
**կամ Քրիստոսի գալուստը. Զատիկ կամ Սուրբ Յարութիւն.**  
**Համբարձումն. Հոգեգալուստ. Վարդապառ. Վերափոխումն**  
**Աստուածնի. Խաչվերաց.**

**Ա. ո ա ծ ն ե ր. Կարմիր ձուն զատկին կը սազի:—**  
Տարին մի զատիկ, այն էլ նատակատիկ:— Ագռաւի բերնով  
վարդապառին ձիւն կը գայ:

Հանելուկներ. Երեք ստնէն, մէկ մորուսէն, կայշներ կուտէ մեր հօր քիսէն:—Երկէն աղեք, ծէրը ծաղիկ:

**Այուրին:**

Նուրին—Նուրին եկել է, Եղ բերէք պրոտը քսենք,  
Ազգահուրին եկել է, Զուր բերէք գլխին ածենք,  
Նելայ շապիկ հագել է, Մեր Նուրինի փայը տուէք,  
Կարմիր գոտիկ կապել է. Ուտենք, խմենք, քէֆ անենք:

**Շանակ:**

Ճըռ, ճըռ, ճշանակ, Աւ եզր մատաղ անենք,  
Աստուծոյ դուււը բանանք, Պողերը չարդակ անենք,  
Դուրսը ժամ ամենք, Տակը նստենք, բարդահ անենք:  
Ներսդանք, պատարագ անենք:

**Սուրբ Մարգարի երգը:**

Ալէլուիա, ալէլուիա.

Հըրէս եկաւ մի ձիաւոր,

Լախտը ձեռին քաջ ձիաւոր,

Աջու ձեռին Աւետարան,

Զախու ձեռին Սաղմօսարան,

Ս.ջով գրէր, ձախով ջընջէր,

Զախով գրէր, աջով ջընջէր:

Բարեկամ, երեխայիդ անունն ի՞նչ է:

Ձեր . . . թախտին նստի,

Փափուկ ձեռը ջէրը տանի,

Հինդ աբասին ջէրից հանի

Սուրբ Սարգըսին մատաղ անի:

ԽՈՐԱՄԱՆԿ ԱՂՈՒԷՍԻ ՄԱՍԻՆ

**1. Գիւղացու վիշտը.**

Գիւղացին իւր ցաւերը գանգատեցաւ որսորդին՝  
թէ աղուէսը գողացել է նորա հաւանոցից երկու հաւեմի բադ, թէ նա ամենեին չէ վախենում շանից, որ բագումը կապած՝ ամրող գիշեր հաջումէ, իսկ եթէ թակարդ է սարքում և վերան էլ փափուկ մսի կտոր է դընում, առաւտօր տեսնում է, որ խորամանկ կենդանին պայցու է արել թակարդի չորս կողմով, իսկ մսին ձեռք տալ էլ չէ կամեցել Որսորդն ականջ դրեց գիւղացու գնագատին և ասաց. լաւ, այժմ մենք կը տեսնենք, թէ մեզանից ով աւելի խորամանկ է:

**2. Որսորդի գիտաւորութիւնը.**

Ամբողջ օրը որսորդը հրացանն ուսին, շունը յետեւից, ման էր գալիս աղուէսի հետքերով, որ պարզ երեւում էին ձիւնի վերայ, և կամենում էր իմանալ թէ որտեղից է գալիս նա բագը: Ցերեկը այդ խարդախը քնում էր իւր խոր որջի մէջ, ոչինչ չէր իմանում—ահա այդ ժամանակ պէտք էր բանը սարքել: Որսորդը նորա ճանապարհի վերայ մի փոս փորեց, փոսի երեսը ծածկեց տախտակներով, վերան հող ածեց, իսկ հողի երեսից—ձիւն: Մի երկու քայլ հեռու նա ձգեց սատկած ձիու մսի կտոր: Երեկոյ յեան նա հրացանը ձեռին մտաւ իւր պատրաստած փոսի մէջ և այնպէս նստեց, որ ամեն բան տեսնէ և արձակելն էլ յարմար լինի.—Նստեց և սպասեց:

### 3. Աղուէսի զգուշութիւնը:

**Մթնեց:** Խուսինը դուրս եկաւ: Զգուշութեամբ, իւր շնորհը նայելով և ականջ դնելով, դուրս սողաց աղուէսը իւր որջից, բարձրացրեց ցռուկը և հոտ քաշեց, նա խսկոյն զգաց ձիու մսի հոտը, վազեց մեղմ ընթացքով դէպի այն տեղը և յանկարծ կանգնեց, ականջները սրեց. տեսաւ խորամանկը, որ այդ տեղ նոր ածուածք կայ, որ երեկ չկար: Այս ածուածքը, ինչպէս երեսում է, նորան անհանգիստ էր անում և հարկադրում էր մտածել: Նա սկսեց հեռուից սկսել այդ ածուածքի շուրջը, հոտու ականջ դնել գետնից կաշել և երկար նայել մսին, այնպէս որ մեր որսորդը ամենմին չէր կարող արձակել, նորա դէմ իւր հրացանը—հեռու էր:

### 4. Ոչ ում խարեց:

**Մտածեց** մտածեց աղուէսը—և յանկարծ, ամենայն արագութեամբ, վազեց անցաւ ածուածքի և մսի միջով, որսորդն զգուշացաւ, հրացանը չարձակեց: Նա հասկացաւ, որ խորամանկ կենդանին փորձ է փորձում, թէ արդեօք ոչոք չկայ նստած ածուածքի յետել, և եթէ նա արձակէր հրացանը, կարող էր սխալուիլ և նորան էլ աչքով—երազով չէր տեմիլ: Այս փորձից յետոյ աղուէսը միաւ մտում է, ածուածքը նորան էլ չէ վախեցնում: Համար ձակ քայլերով մօտենում է նա մսին և ուտում է ամենայն գոհանակութեամբ: Այդ ժամանակ որսորդը իւր

թագկացած տեղից զգուշութեամբ նշան է զնում, որ չը սիսալուի, և ըլմբ—արձակում է, հրացանը: Աղուէսը դլապդը է զայխ ուստիում:

ՀԱԻՐ ԵՒ ԲԱԴԻ ՎԱՌԻԿԸ

### 1. Պառաւը հաւանոցում.

**Առաւօտը** շատ վաղ՝ պառաւը գնաց հաւանոցը մի կթոց ձեռքին: Կթոցի մէջ խոտ էր ածած, խոկ խոտի վերայ դարսած էր տասներեք հատ ձու: Պառաւը դլեց կթոցը մի տաք տեղ և նորա վերայ թուխս նստացլեց մի գանգրաւոր հաւ: Հաւանոցը մութն էր և պառաւը չկարողացաւ նկատել, որ ձուերից մինը քիչ փոքր էր միւսներից և ոչ թէ սպիտակ, այլ կանանշաւուն:

### 2. Խոչ դուրս եկաւ ձուերից:

**Հաւը** ճշառւթեամբ նստեց ձուերի վերայ. միայն վեր էր կենում կուտ ուտելու և ծուր խմելու և նորից վաղում էր իւր տեղը: Անցկացաւ երեք շաբաթ, և ձուերի միջից սկսեցին վառիկներ գուրս գալ: ձագը ներսից կտուցով խոտում էր ձուի կեղեին, կոտրում էր նորան, դուրս էր սողում և խոկյն վազում էր Ճիճուներ որոնելու: Կանաչաւուն ձուից ամենից ուշ ձագ դուրս եկաւ և դուրս եկածն էլ ամենեին նման չէր միւսներին: Նա կոլոր էր, առելի բրդոտ, գեղին, ոտները կարճ—կարճ, քիթը լայն, մանգալիս էլ օրօրվում էր, այս ու այն կողմն էր լնկնում:

Տեսնում է հաւը, որ այս ձագը բոլորվին ուրիշ տեսակ բան է, բայց էլի պահպանում ու կերակրում է նորան, ինչպէս միւսներին.—Հէնց որ տեսնում է ցինը, սկսում է իւր թերի տակ ժողովել ինչպէս բոլոր վառիկներն, այնպէս էլ սորան:

### 3. Ո՞ւր կորաւ այդ վառիկը:

Ա առիկները մեծացան: Հաւը նորանց տարաւ լջի  
ափը, ուր շատ ճիճուներ կային և հողն էլ աւելի փա-  
փուկ էր քջուջ անելու համար: Հենց որ կարծառու վա-  
սիկը տեսաւ ջուրը, իսկոյն ընկաւ նորա մէջ: Հաւն սկը-  
սեց կրկչալ թէւերը թափահարել դէպի ջուրը փազել  
միւս վառիկները նմանապէս շփոթուեցան, վազվըլցին,  
ծվծվացին. փոքրիկներից մինը երկիւղից թռաւ, կանգնեց  
մի քարի վերայ և առաջին անգամ երգեց՝ ծռ—ըռ—  
ղռ: Բոլոր ձագերը շփոթուեցան. իսկ կարծառու ձագը  
հանդարտ լողում էր ջօթ երեսին, ոչինչ բանից չէր վա-  
խենում և ջուրը ճեղքում էր իւր թաղանթապատ թա-  
թիկներով: Հաւի կրկչոյի վերայ դուրս վազեց պառաւը:  
Հենց որ տեսաւ նա, թէ ինչ է պատահում, իսկոյն բա-  
ցագանչեց. Այս, ինչպէս սխալուել եմ. մթնումը չեմ կա-  
րողացել նկատել որ հաւի տակ բաղի ձու եմ դնում: Այս  
ասելուց յետոյ՝ նա հազիւ կարողացաւ դէպի տուն քշել  
թուխը:



Գիւղացին տեսաւ մի՞ օձ, որ ցրտից սառել էր, վեր կալու, դրեց ծոցումը և՝ տաքացրեց: Օձը՝ տաքացաւ թէ չէ, դլուխը հանեց, յարձակուեցաւ գիւղացու վերայ և կամնում էր կծել նորան: Գիւղացին ասաց. «Այ օձ, ես քեզ տաքացըի, մեռնելուց ազատեցի, որ ինձ կծեա»: Օձը պատասխան տուեց. «Մատուած մեզ միայն կծելու նորհք է տոռելը մենք աւելի սկալը է մարդկանց կծենք, եթէ նորանք մեզ ազատած էլ լինին, որովհէ ետեւ մարդու պէս ապերախտ արարած չկայ աշխարհում»: Գիւղացին ասաց. «Այ օձ, արի ինձ մի կծիր, քո ձեռքովդ իմ գատաստանս մի կտրիր, թող կանչենք երեք գատաւոր և նորանք մեր գատաստանն անեն»: Օձը համաձայնեցաւ. կանչեցին մի պառաւ ձի: Զին ասաց. «Մարդը ամենից ապերախտն է աշխարհիս երեսին. ես նորան քանի քանի տարի է ծառայում եմ, նորա կեանքը պատերազմների մէջ աղատել եմ, նորան մինչեւ այսօր շալակած ման եմ ածել

և հիմայ, որ ծերացել եմ, էլ երեսիս չէ մտիկ տալիս և կամենում է ինձ մորթել տալ, որ կաշիս ծախէ:»

Յետոյ կանչեցին մէկ ծեր գոմեշ։ Գոմեշն ասաց.  
«Մարդու պէս ապերախտ արարած չեմ տեսել աշխար-  
հում։ — Քանի որ ես փոքր էի և ուժեղ, նա ինձ լծեց  
իւր սայլում, արօրում, ցաքանում, և ամեն կերպով ծա-  
ռայեցրեց ինձ։ Հիմայ երբ մի փոքր ծերացել եմ, կամե-  
նումէ ինձ մոլթել իմ միսն ուտել և կաշուից իւր հա-  
մար տրեխներ ջիներ»։

Գիւղացու բանը վատ էր. մի դատաւորն էր Ֆնացել: Կանչեցին աղուէսին: Աղուէսը՝ տեսնելով թէ բանն ինչ տեղն է հասել փսխաց գիւղացու ականջումը. Եթէ ինձ մի գեր հաւ կը խոստանաս քո հաւաբունից, ես քեզ կ'ազատեմ: Մարդը զլսով արեց: Աղուէսն այսպէս սկսեց խօսել. «Օձ եղբայր, ես ամենից առաջ շատ եմ զարմանում, թէ ինչպէս ես դու տեղաւորվում այս ծակի մէջ. չէ, ես չեմ հաւատում, այս քո բունը չ'պէտք է լինի. Խնդրեմ մի փորձի համար ներս սողա սորա մէջ, տեսնեմ: Օձ ներս սողաց: Խորամանկ աղուէսը նորա քնի բերանը մեծ քարով ծածկեց և խեղճ գիւղացուն օճից ազատեց: Միւս օրը՝ առաւօտեան, աղուէսը գնաց գիւղացու տուն՝ հաւն ստանալու: Գիւղացին քնած էր: Նորա ծառանկերը սաստիկ թակեցին խեղճ աղուէսին և ձանապարհ գցեցին: Այն ժամանակ աղուէսը՝ թափ տալով իւր պոչը առաց. Ճշմարիտ որ մարդը շատ ապերախտ է եղել.

Անցաւ ակ բաշ եղաց ու Ա  
Առաջ ակ այս պատճենաւ  
այծին կը լի պաշար ու զանդ  
Ա առաջ ակ առ պատճեն

ԹԱՐՅԱԿ (ԵՐԳ) \*

**Մանուկներ.**

Արուն թռչնակ, բռնուեցար,  
Ցանցից չես ազատուիլ.  
Ոչինչ բանով աշխարհում  
Քեզնիս, ևնոր բաժանուիլ:

Ա. Ես, ձեր ինչի՞ն եմ պէտք Ես,  
Սիրելի մանուկներ.

**Չէ,** **չէ,** **թռչնակ,** **չենք** **թողնիր,**  
**Դու** **մեզ** **մօտ** **կը** **մնաս.**  
**Մենք** **քեզ** **շաքրիէ** **հաց** **կըտանք,**  
**Կ'ուտես,** **կ'ուրախտնաս:**

Թոչնակ.

Ուի, շաքրէ հաց չեմ սիրում,  
Քաղցրեղէն չեմ ուտում.  
Թողէք, դաշտի մորեխնելն  
Նաքրից լաւ եմ հաշում:

Մանուկներ.

Այնտեղ, դաշտում ձմռը  
Գուցէ ցրտից մեռնիս,  
Խսկ մեզ մօտ ոսկուց շինած  
Վանդակի մէջ կ'ապրիս:

Թոչնակ.

Ո՛, մի վախէք՝ ձմռը  
Տաք կողմեր կը թռչեմ,  
Խսկ բռնուած՝ դրախտն էլ  
Խնձ բանտ կը համարեմ:

Մանուկներ.

Թռչնակ, թռչնակ, մենք ինչպէս  
Քեզ կը փայխայէինք,  
Զէինք թռողնիլ, որ ախրես,  
Միշտ կ'ուրախացնէինք:

Թոչնակ.

Հաւատում եմ. բայց ձեր սերն  
Խնձ միշտ կը մնանք,  
Որովհետեւ այդ կերպով  
Աչքս յաւիտեան կը փակուեք:

Մանուկներ.

Ճշմարիտ է, ով թռչուն,  
Գերովժեան չես տանիլ.  
Այսու և այս Աստուած քեզ հետ, դէ՛մ թռիր, զարդէ՛մ  
Հայուս և Աղատ, ուրախ եղիր:

Հ. Բ. Ա. Ի Ե. Բ. ա մանուկ ով պահ  
Օմակարգ բարձր առ ամառ մանուկ ամառ  
Եկէք, բարեկամք, եկէք,  
Արագ արագ վագեցէք.

Դասի սեղանը դրած է,  
Դասաղբքերը բերած է.  
Ժամանակ է, վագեցէք,  
Եկէք, բարեկամք, եկէք:

### Գիւղացին \*

(Սանկական խաղ 4)

|                        |                        |
|------------------------|------------------------|
| Գիւղացին ո՞նց է անում  | Սիրուն ցորենն հնձելիս, |
| իր արտումը բանելիս,    | Աշխատելով անգագրում:   |
| Արին քրտինք թափելիս,   | Գիւղացին ո՞նց է անում: |
| Երբ որ ցորեն է ցանում: | Ահա այսպէս անում է:    |
| Գիւղացին ո՞նց է անում: | Երբ ցորենը հնձում է,   |
| Ահա այսպէս անում է     | Լա, լա, լա, և այն:     |
| Երբ ցորենը ցանում է.   | Գիւղացին ո՞նց է անում  |
| Լա, լա, լա (4 անգամ):  | Երբ անհամար հասկերը    |
| Գիւղացին ո՞նց է անում  | Ծածկում են իր արտերը:  |
| իր արտումը բանելիս,    | Երբ իր ցորենն կրում է, |

1) Այս խաղերի մասին տես բացադրական գրքի մէջ:

Գիւղացին ո՞նց է անում:  
Ահա այսպէս անում է  
Երբ ցորենը կրում է.  
Լա, լա և այն:  
Գիւղացին ո՞նց է անում  
Արտիցը յետ դառնալով,  
Ամբարը լի ցորենով,  
Երբ իր ցորենն է կալսում  
Գիւղացին ո՞նց է անում:  
Ահա այսպէս անում է,  
Երբ ցորենը կալսում է:  
Լա, լա, լա և այն:

Գիւղացին ո՞նց է անում,  
Երբ խճիթը յետ գալիս  
Պարզ անկողին մտնելիս  
Բուքքամուց անհոգ լինում:  
Գիւղացին ո՞նց է անում:  
Այսպէս քնում է խաղաղը  
Սիրտը հանդիսաւ և ուրախաւ  
Լա, լա, լա, և այլն:

Ապա անհոգ գիւղացին,  
Յետ ծանր աշխատանքին,  
Նոր ոյժ, նոր սիրտ է առնում,  
Զբոսնում է ու երգում  
Լա, լա, լա, և այլն:


Հանելուկիների բացադրութիւնները

Baptism

- «37»—1. Փետութէ գրեւ:—2. Հոլ (ըզզան, թօփահ):  
 «39»—1. Զու: 2. Զուր—դիտ: 3.—Գլուխ շաքար:  
 «40»—1. Մէկ և երկու:—2. Հենդը բաժանած եվեքի մէջ:  
 «43»—1. Հրացան:—2. Թուր, դաշնի:  
 «45»—1. Սեղան:—2. Ֆեշտաեռ (ասմալաթ):  
 «48»—1. Կով:—2. Փեղ:—3. Կրիաչ:  
 «51»—Արեգակ:  
 «54»—1. Թուզ:—2. Ցողեն:—3. Նուշ—4 Մանեշակ:  
 «56» 1. Ոսկի և արծաթ:—2. Ոսկի:  
 «60»—1. Բերան, ակամիջներ, աչքեր:—2. Քիթ:  
 «68»—Բերան և ատամներ:—2. Ձեռների և ոտների մատները:  
 «73» Կարդալ գրել—ուսում:  
 «75»—Մարդս մանկական, այբական և գառամեալ հասակ-  
 էներ, մէջ:



2n



ՀՅ Ազգային գրադարան



NL0666844

